ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ
MINISTRY OF AGRICULTURE OF THE REPUBLIC OF ARMENIA
MINISTER
МИНИСТЕРСТВО СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
МИНИСТР

Ձեր ____________ N __________ 07-Թ11.06-5764 N 25 12 09թ.

ՀՀ ֆինանսների նախարար
պարոն Տ. Դավթյանին

Հարգելի պարոն Դավթյան,

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 11-րդ հոդվածների դրույթների՝ ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի «Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում» ծրագրով նախատեսված ծախսերի հաշվին Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ու «Արամ և Արմեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքված «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» գնման պայմանագրի կնքման գործընթացի վերաբերյալ կազմված գնման ընթացակարգի արձանագրությունը և հայտարարությունը՝ գնումների պաշտոնական տեղեկագրում հրապարակելու համար:

Հարգանքով՝ Գ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

375010, Երևան-10, Հանրապետության հր. Կառավարական տուն 3
3 Government Building, Republic Square, Yerevan, 375010, Republic of Armenia
Дом правительства, 3, Площадь Республики, Ереван 375010, РА

Հեռ. / Tel / Тел: (374 10) 524 641
Ֆաքս / Fax / Факс: (374 10) 523 793
Էլփոստ / E-mail / эл.почта : frdmoa@agrounit.am

*Հաստատված է*
*ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի*
*2001թվականի փետրվարի 9-ի թիվ հրամանով*

*Ձև N 5*

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿՆՔՎԱԾ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*/Հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի համաձայն/*

*2009 թվականի դեկտեմբերի 25-ին պատվիրատու` ՀՀ գյուղատնտեսության նախարարության, որը գտնվում է ք. Երևան Կառավարական տուն 3 հասցեում և կատարող «Արամ և Արմեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև կնքվել է «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):*

*Գնման առարկա է հանդիսանում ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի մաքրման և ափերի ամրացման աշխատանքների իրականացումը:*

*Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 19587645 . ՀՀ դրամ:*

*Գնումները կատարվում են ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու Ռուսաստանի Դաշնության ԴԱԾ սահմանապահ զորքերի 9-րդ ուղեկալի տարածքում հեղեղատար ջրանցքի մաքրման ու ափերի ամրացման նպատակով:*

*Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ մեկ անձից գնումներ կատարելու ձևով:*

***ՀՀ գյուղատնտեսության նախարարություն***

Հաստատված է
ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի
նախարարի 2001թ. մարտի 29-ի
թիվ 185 հրամանով

Հաստատում եմ
Գ. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ
(Պատվիրատուի ղեկավարի անունը, ազգանունը)
(Ստորագրությունը)
«25» «դեկտեմբերի» 2009թ.

Կ. Տ.

# ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.Հիմնական տեղեկություններ գնման մասին

1.1 Պատվիրատուի

Անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
Հասցեն ք. Երևան, Կառավարական տուն 3

1.2. Գնման առարկայի տեսակը

ապրանք ☐ աշխատանք ☑ ծառայություն ☐

1.3. Կարիքի բավարարման միջոցը

գնում ☑ վարձակալություն ☐ լիզինգ ☐

1.4 Գնման առարկայի համառոտ նկարագիրը. ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքից հարող սահմանային գոտու տարածքում Վերիչայ հեղեղատար ջրանցքի մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ

1.5. Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձանց
Անվանումը (անունը, ազգանունը)
**«Արամ և Արմեն» ՍՊԸ**
Հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, գյուղ Ազատավան
Հեռախոսը (աշխ) 093-43-14-19
ֆաքսը ,էլ փոստի հասցեն

1.6. Կնքված գնման պայմանագրերի (կցվում են)

- Ծածկագիրը ՀՀԳՆ - ԱԾՁԲ - 09/05
  Կնքման ամսաթիվը 25.12.2009թ.

Գործողության ժամկետը պայմանագիրն ուժի մեջ մտնելուց մինչև կողմերի լրիվ պարտավորությունների կատարումը

Գինը՝ 19587645 (տասնինը միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ:

1.7. Գնման ֆինանսավորման աղբյուրը՝ ՀՀ 2009թ. պետական բյուջե
Բյուջեից ֆինանսավորվելու դեպքում նաև բյուջետային ծախսերի դասակարգման՝
Բաժին 04 Խումբ 02 դաս 01 Ծրագիր 21
Նախարարություն (գերատեսչություն հոդված 104007)

Արձանագրության վարման
պատասխանատուի ստորագրությունը

1.8. Գնումների պաշտոնական տեղեկագրում կնքված պայմանագրի մասին տեղեկատվություն հրապարակելու նպատակով պատվիրատուն լիազոր մարմնին ներկայացրե՞լ է պահանջվող տեղեկատվության տեքստը

Այո [V] Ոչ [ ]

2. Գնման գործընթացի նախապատրաստումը
2.1. Գնման պահանջի ծագման

Իրավական հիմքը Հայաստանի Հանրապետության կառավարության դեկտեմբերի 17-ի N 1462-Ն որոշումը (կցվում է)
Օրը ամսաթիվը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից

2.2. Պատվիրատուի ղեկավարը սահմանել է՝

[V] Պատասխանատու ստորաբաժանում [ ] Տեխնիկական հսկողության հանձնաժողով

Անվանումը Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչություն

Իրավասությունը վերապահելու հիմքը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարի 29.12.2008թ N 271- Ա հրամանը

Ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը

Հողերի օգտագործման և մելիորացիայի վարչության պետ ՝ Վ. Հովհաննիսյան

Հեռախոսը (աշխ) 29– 74-33 ֆաքսը էլ փոստի հասցեն

2.3. Գնման բնութագրերը պատվիրատուի ղեկավարի կողմից հաստատելու հիմքը ՝
ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 291-Ա հրամանը:

2.4. Մեկ անձից գնման ձևի կիրառման պայմանը ըստ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23 հոդվածի համապատասխան կետի՝

[ ] Գնման ենթակա ապրանքները, աշխատանքները, ծառայությունները հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով մրցակցության բացակայությամբ, լիցենզիայի առկայությամբ

[V] արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հետևանքով ծագել է գնման անհետաձգելի պահանջ, և գնման այլ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է, պայմանով որ նման պահանջը հնարավոր չէր կանխատեսել, ինչպես նաև եթե գնման առարկան ներառված չ պարբերական մրցույթով կնքված պայմանագրերում.

[ ] պատվիրատուն, որևէ անձից կատարելով գնում՝ որոշում է լրացուցիչ գնումներ կատարել նույն անձից, պայմանով, որ դրա գինը չգերազանցի սկզբնական գնման պայմանագրի գնի 20 տոկոսը: Միևնույն անձից սույն պայմանի կիրառմամբ լրացուցիչ գնումներ կարող է կատարվել միայն մեկ անգամ:

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը ..........

2.5. Մեկ անձից գնման ձևի կիրառման ընտրված պայմանի հիմնավորումը

ՀՀ Արարատի մարզի Երասխավան համայնքին հարող սահմանային գոտու Ռուսաստանի Դաշնության ԴԱԾ սահմանապահ զորքերի 9-րդ ուղեկալի տարածքում հեղեղատար ջրանցքի հունի խցանման հետևանքով ստեղծվել է հեղեղավտանգ (արտակարգ) իրավիճակ: Հաշվի առնելով, որ նշված աշխատանքներն անհրաժեշտ է ձեռք բերել մինչև 2010 թվականի փետրվարի 2-ը ներառյալ ու ծագել է ջրանցքի մաքրման աշխատանքների գնման անհետաձգելի պահանջ և գնման այլ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է, ուստի գնման ընթացակարգը կազմակերպվել է մեկ անձից գնման ձևով:

3. Գնման պայմանագրի կնքումը

3.1. Գնման պայմանագիրը կնքելու նպատակով պատվիրատուի առաջարկը ներկայացնելու միջոցը՝

☐ Գնանշման հարցում

☑ Մեկ անձին պայմանագիր կնքելու առաջարկի ներկայացում

3.2. Տեղեկություններ այն անձանց մասին, որոնց ուղարկվել է պատվիրատուի առաջարկը.

| հ/հ | Անվանումը (անուն, ազգանունը) | Հասցեն | Ներկայացված առաջարկի հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը /կցվում է / |
|---|---|---|---|
| 1 | «Արամ և Արմեն» ՍՊԸ | ՀՀ Արարատի մարզ, գյուղ Ազատավան | 07–ԱԳ–06–5745<br>24.12.2009թ |

3.3. Տեղեկություններ պատվիրատուի առաջարկը ընդունած անձանց վերաբերյալ.

| հ/հ | Անվանումը (անուն, ազգանունը) | Հասցեն | Առաջարկը ընդունելու հիմքը՝ գրության համարը և ամսաթիվը /կցվում է / |
|---|---|---|---|
| 1 | «Արամ և Արմեն» ՍՊԸ | ՀՀ Արարատի մարզ, գյուղ Ազատավան | N 1/25<br>25.12.2009թ |

3.4. Տեղեկություններ պատվիրատուի կողմից մերժված առաջարկությունների վերաբերյալ.
Մերժե՞լ է Պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պայմանագրի կնքման նպատակով մասնակցին ուղղարկված գրությամբ սահմանված կարգի խախտմամբ ներկայացված լինելու պատճառով.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

| Առաջարկը ներկայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը ........................

Մերժել է պատվիրատուն որևէ առաջարկ՝ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել գնումներին մասնակցության իր իրավունքը.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

| Առաջարկը ներկայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |

Մերժե՞լ է պատվիրատուն որևէ առաջարկ այն պատճառով, որ առաջարկը ներկայացրած մասնակիցը սահմանված կարգով չի հավաստել որակավորման իր տվյալները.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

| Առաջարկը ներկայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Մերժման հիմքը | Մերժման մասին ծանուցելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |

3.5 Բանակցություններ

Պատվիրատուն վարե՞լ է բանակցություններ

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Պատվիրատուին ներկայացնող անձի ( անձանց)

Պաշտոնը

Հեռախոսը (աշխ) ֆաքսը էլ. փոստի հասցեն

Մասնակցին ներկայացնող անձի (անձանց)

Անուն, ազգանունը

Պաշտոնը

Հեռախոսը (աշխ) ֆաքսը էլ. փոստի հասցեն

4 Բանակցությունների արդյունքների համառոտ նկարագիրը: Կասեցում

Կասեցրե՞լ է պատվիրատուն գնման գործընթացը.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

Կասեցման հիմքը՝ պատճառը

Կասեցման ժամկետը

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը ..........

5 Բողոքարկում

Ստացե՞լ է պատվիրատուն գնման գործընթացի հետ կապված որևէ բողոք.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

| Բողոքը ներկայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Բողոքի համառոտ նկարագիրը | Բողոքը ներկայացնելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |

Ընդունե՞լ է պատվիրատուն որոշում բողոքի կապակցությամբ.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

| Որոշման համառոտ բովանդակությունը | Նման որոշում կայացնելու իրավասության հիմքը | Բողոքը ներկայացնելու անձին որոշումը տրամադրելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |

Եթե ոչ, ապա նշել՝

| Որոշում չկայացնելու պատճառը | Բողոքը ներկայացրած անձին ծանուցելու ամսաթիվը (գրության պատճենը կցվում է) |
|---|---|
| | |

Բողոքարկվել են պատվիրատուի գործողությունները լիազոր մարմնին.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

| Բողոքը ներկայացրած անձի անվանումը (անուն, ազգանունը) | Բողոքի համառոտ նկարագիրը | Բողոքի մասին պատվիրատուին ծանուցելու ամսաթիվը (լիազոր մարմնի գրության պատճենը կցվում է) |
|---|---|---|
| | | |

Ընդունել է լիազոր մարմինը որոշում ներկայացված բողոքի կապակցությամբ.

Այո ☐ Ոչ ☑

Եթե այո, ապա նշել՝

| Որոշման համառոտ բովանդակությունը | Լիազոր մարմնի որոշումը ստանալու ամսաթիվը (Լիազոր մարմնի գրության պատճենը կցվում է) |
|---|---|
| | |

6 Գնման ընթացակարգի արձանագրության վարման պատասխանատու անձի

Անուն, ազգանունը Արթուր Էլոյան

Պաշտոնը Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության ֆինանսաբյուջետային բաժնի առաջատար մասնագետ

Հեռախոսը (աշխ) 523 -685 ֆաքսը էլ. փոստի հասցեն

Արձանագրության վարման պատասխանատուի ստորագրությունը ..........

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
## N ՀՀԳՆ-ԱՇՁԲ - 09/05

ք. Երևան «25» դեկտեմբերի 2009 թ.

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը, , ի դեմս նախարարի տեղակալ Ս. Գալստյանի, որը գործում է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2009 թվականի դեկտեմբերի 24-ի N 291-Ա հրամանով իրեն վերապահված լիազորությունների հիման վրա, այսուհետև՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Արամ և Արմեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ի դեմս տնօրեն՝ Ա. Վահանյանի, այսուհետև՝ «Կապալառու», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### *1. Պայմանագրի առարկան*

1.1 Կապալառուն պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի մաքրման և ափերի ամրացման աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել աշխատանքի արդյունքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 Հավելվածով նախատեսված աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1462 –Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 աշխատանքնային օրվա ընթացքում:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով: Սույն պայմանագրում նշված՝ Աշխատանքների կատարման ժամկետները կարող են փոփոխվել Կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### *2. Կապալառուի միջոցներով աշխատանքները կատարելը*

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

### *3. Կողմերի իրավունքները և պարտականությունները*

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժերը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված նախագծանախահաշվային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.4 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կապալառուին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալը պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կապալառուին.

3.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքների կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն երկու և ավելի անգամ խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները.

ե) Կապալառուն չի կատարում սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային պայմանները՝ սույն պայմանագրի 3.4.8-3.4.9 կետերին համապատասխան:

3.1.6 Առանց կատարված աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը, եթե Կապալառուից ստացած ոչ հավաստի տեղեկատվության հետևանքով կնքվել է աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները.

3.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 722 հոդվածով սահմանված երաշխիքային ժամկետում:

3.1.8 Աշխատանքի արդյունքում, այն ընդունելուց հետո՝ 5 (հինգ) տարվա ընթացքում, Պատվիրատուի կամ այլ անձանց կյանքին կամ առողջությանը վտանգ սպառնացող թերություններ հայտնաբերելու դեպքում պահանջել անհատույց վերացնելու այդ թերությունները կամ վերադարձնելու աշխատանքի համար վճարված գնի մասը կամ հատուցելու իր կամ այլ անձանց ուժերով թերությունները վերացնելու կապակցությամբ կատարված ծախսերը.

3.1.9 Լրացուցիչ այլ անձի Աշխատանքների իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողության իրականացնելու նպատակով՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Կապալառուին.

3.1.10 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքները կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագրի կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված դեպքերի:

3.3.3 Մինչև Աշխատանքը Պատվիրատուին հանձնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

3.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան::

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքները դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը: Կապալառուն կրում է նաև սույն պայմանագրով նախատեսված պայմանագրային գումարի չափով աշխատանքների կատարումից հետո մինչև պայմանագրի ընդհանուր գնի հաշվին պայմանագրի 5.1.1 կետում նշված լրացուցիչ համաձայնագրով նախատեսված՝ կատարման ենթակա աշխատանքների իրականացումը, շինարարության կոնսերվացման հետ կապված ծախսերը:

3.4.8 Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ողջ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանած ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Կապալառուի կողմից սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային պայմանների չկատարումը հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

## *4. Աշխատանքների հանձնման և ընդունման կարգը*

4.1 Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված գրաֆիկով: Աշխատանքների ընդունումն իրականացվում է Կապալառուի կողմից ներկայացվող, սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածով նախատեսված աշխատանքների հանձնման-ընդունման արձանագրության, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված այլ փաստաթղթերի հիման վրա:

4.1.1 Աշխատանքի կատարման պահից 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

4.2 Պատվիրատուն Աշխատանքի կամ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների հանձնման-ընդունման արձանագրությունը և հաշվետու այլ փաստաթղթերն ստանալու պահից 40 օրվա ընթացքում Կապալառուին է ուղարկում հանձնման-ընդունման՝ ստորագրված արձանագրության մեկ օրինակը կամ դրա պատճառաբանված մերժումը:

4.3 Կապալառուի կողմից ավարտված աշխատանքները կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերը և ծավալները Պատվիրատուի կողմից ընդունված են համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

4.4 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.5 Եթե Աշխատանքի ընդունման ժամանակ պարզվի, որ անհրաժեշտ է, ի տարբերություն սկզբնական նախահաշվային փաստաթղթերի, լրամշակել կամ փոփոխել Աշխատանքի առանձին պայմանները, ապա այդ աշխատանքները կատարվում են լրացուցիչ համաձայնագրով՝ նշելով դրանց կատարման ժամկետը և արժեքը:

## *5. Աշխատանքի գինը և վարձատրությունը*

5.1. Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 19587645 (տասնինն միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամ, որից 3264608 (երեք միլիոն երկու հարյուր վաթսունչորս հազար վեց հարյուր ութ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պայմանագրի գնի՝ 100 տոկոսը 19587645 (տասնինը միլիոն հինգ հարյուր ութսունյոթ հազար վեց հարյուր քառասունհինգ) ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար: Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով , որը հաշվարկվում է աշխատանքի ընդհանուր գնի մեջ և մարվում մինչև նախատեսված աշխատանքների ավարտը: Կանխավճարի մարումն իրականացվում է արձանագրությունների հիման վրա: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը հավասար է աշխատանքի վերաբերյալ կազմված հանձնման և ընդունման արձանագրության չափին, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

5.2 Սույն պայմանագրով նախատեսնված՝ Աշխատանքի առանձին փուլերի և ծավալների գները ներկայացված են սույն պայմանագրի N 1 հավելվածում: Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի կատարման արդյունքում Կապալառուի ստացած խնայողությունը բաշխվում է Կողմերի միջև՝ հավասարաչափ:

## *6. Կողմերի պատասխանատվությունը*

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտման դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքների ներառյալ առանձին փուլերի արժեքի 0,05%-ի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,05%-ի չափով:

6.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետերով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

6.5 Սույն պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.6 Տույժերի և տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

6.7 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին օրենսդրության պահանջների կատարման վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը (Կապալառուն) ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ կատարողի հետ պայմանագիր կնքելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա, այդ հիմքերը ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծելու սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանա սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով (Կապալառուի) համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը , իսկ ( Կապալառուն) պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել պատվիրատուի կրած վնասերն, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

### 7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը` այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

### 8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի միջև պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած` կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած` հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.2 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ` նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

8.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.5 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N1, N2, N3 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

### 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պատվիրատու**

**ՀՀ գյուղատնտեսության նախարարություն**
ք. Երևան Հանրապետության Հրապարակ,
Կառավարական տուն N 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
հ/հ 900011008647

Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

**Կապալառու**

**«Արամ և Արմեն» ՍՊԸ**
ՀՀ Արարատի մարզ, գյուղ Ազատավան

«Կոնվերսբանկ»ՓԲԸ,Արտաշատի մ/ճ
հ/հ 1930002363670100
հվհհ 04211963

Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Հավելված թիվ 1
25 դեկտեմբերի 2009 թվականին
կնքված աշխատանքների կատարման
թիվ ՀՀԳՆ-ԱՇՁԲ- 09/ 05գնման պայմանագրի

## Ծավալաթերթ Նախահաշիվ

**ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի մաքրման և ափերի ամրացման աշխատանքների**

| №№ | Աշխատանքների անվանումը | Չափի միավորը | Քանակ | Արժեքը /հազ. դրամ/ միավորի արժեքը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **1. Հողային աշխատանքներ** | | | | |
| 1.1 | Գետի հունի մաքրում բերվածքներից (III կարգ) կողալիցքով | $մ^3$ | 12200 | 0,40 | 4880,0 |
| 1.2 | III կարգի բնահողի մշակում կողալիցքով | $մ^3$ | 18300 | 0,25 | 4575,0 |
| 1.3 | Դամբաների զագաթների հարթեցում | $մ^2$ | 7500 | 0,40 | 3000,0 |
| 1.4 | Գետի աջ և ձախ շեպերի կարգավորում | $մ^2$ | 9750 | 0,317 | 3090,8 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 15545,750 |
| ՇԱՀՈՒՅԹ 5% | | | | | 777,288 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | 16323,038 |
| ԱԱՀ -20% | | | | | 3264,608 |
| ԱՄԲՈՂՋԸ | | | | | 19587,645 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն
ք. Երևան, Հանրապետության Հրապարակ,
Կառավարական տուն N 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
հ/հ 900011008647

Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

«Արամ և Արմեն» ՍՊԸ

ՀՀ Արարատի մարզ, գյուղ Ազատավան
«Կոնվերսբանկ»ՓԲԸ,Արտաշատի մ/6
հ/հ 1930002363670100

Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

# ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի մաքրման և ափերի ամրացման աշխատանքների

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Ծավալը (Հազար ՀՀ դրամ) | Աշխատանքների կատարման ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | Հողային աշխատանքներ | 19587.645 | Աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1462 –Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 աշխատանքնային օրվա ընթացքում |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 19587.645 | Աշխատանքները պետք է կատարվեն ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 17-ի N 1462 –Ն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 25 աշխատանքնային օրվա ընթացքում |

**Պատվիրատու**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն N 3

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

հ/հ 900011008647

Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

**Կապալառու**

«Արամ և Արմեն» ՍՊԸ

ՀՀ Արարատի մարզ, գյուղ Այգավան

«Կոնվերսբանկ» ՓԲԸ,Արտաշատի մ/ճ

հ/հ 1930002363670100

Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

*Հավելված թիվ 2*
*25 դեկտեմբերի 2009 թվականին*
*կնքված աշխատանքների կատարման*
*թիվ ՀՀԳՆ-ԱԾՁԲ- 09/05 գնման պայմանագրի*

**Կապալառու**

______________________________
______________________________
______________________________
հասցե______________________________
հհ______________________________
______________________________
հվհհ______________________________

**Պատվիրատու**

______________________________
______________________________
______________________________
հասցե______________________________
հհ______________________________
______________________________
հվհհ______________________________

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N ___

## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_____» «_______________» 2010 թ.

Պայմանագրի անվանումը՝ ------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «_______» «________________» 2009 թ.

Պայմանագրի համարը՝____________________.

Պատվիրատուն՝ ի դեմս____________________________________________________________________________ և կատարողը՝ ի դեմս________________________________________________________________________________________________, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ «_____» «_______________» 2010 թ. կազմված տեխնիկական հսկողության հանձնաժողովի (պատասխանատու ստորաբաժանման) N________ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները (այսուհետև՝ աշխատանքներ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «_____» «_____________» 2009 թ–ից «_____» «____________» 2010թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները

| Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը | Կատարված աշխատանքների քանակական ցուցանիշները | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակա-ցույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| **Ընդամենը** | ------------ | ------------ | | ---------- |

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Աշխատանքը հանձնեց**

______________________________
(ստորագրություն)
ազգանուն ______________________
Կ Տ

**Աշխատանքը ընդունեց**

______________________________
(ստորագրություն)
ազգանուն ______________________
Կ Տ

Հավելված թիվ 3
25դեկտեմբերի 2009թվականին
կնքված աշխատանքների կատարման
թիվ ՀՀԳՆ-ԱԸՁԲ- 09/05 գնման պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

1.Հիմնարկի անվանումը ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

2. Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

| Բաժին | Խումբ | Դաս | Ծրագիր | |
|---|---|---|---|---|
| 04 | 02 | 01 | 21 | 104007 |

3. Հիմնարկին սպասարկող գանձապետական բաժանմունքի անվանումը ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

4. Գանձապետական բյուջետային հաշվի համար 900011008647

Ծրագրերի անվանումը՝ «Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում»

/ հազար. դրամ/

| հ/հ | Ձեռք բերվող աշխատանքի անվանումը | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը | Ընդամենը | Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված միջոցներից ըստ ամիսների՝ բնդ որում |
|---|---|---|---|---|
| | | | | տարի |
| | | | | դեկտեմբեր |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| 1 | ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ | 5113 | 19587.645 | 19587.645 |
| Ընդամենը | | | 19587.645 | 19587.645 |

**Պատվիրատու**

ՀՀ գյուղատնտեսության նախարարություն

ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն N 3

ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն

հ/հ 900011008647

Ս. ԳԱԼՍՏՅԱՆ

**Կապալառու**

«Արամ և Արմեն» ՍՊԸ

ՀՀ Արարատի մարզ, գյուղ Ազատավան

«Կոնվերսբանկ»ՓԲԸ,Արտաշատի մ/ճ
հ/հ 1930002363670100

Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

«ԱՐԱՄ ԵՎ ԱՐՄԵՆ» ՍՊԸ

"ARAM EV ARMEN" LLC

ՀՀ Արարատի մարզ,
գ. Ազատավան
հեռ.՝ +37493 431419

v.Azatavan,
Ararat region RA
tel.: +37493 431419


25-12-2009

1/25

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
պարոն Ս. Գալստյանին

Ի պատասխան Ձեր 2009թ. դեկտեմբերի 24 -ի N: 07–ՍԳ –06-5745 նամակի հայտնում եմ. «Արամ և Արմեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը համաձայն է կատարել ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի մաքրման և ափերի ամրացման աշխատանքները 19587645 դրամ գումարով:

Միաժամանակ հայտարարում եմ, որ «Արամ և Արմեն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը

ա) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

բ) դատական կարգով անվճարունակ ճանաչված չէ. լուծարման գործընթացում չի գտնվում. պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք արգելանքի տակ չունի.

գ) կամ ղեկավարի մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում

տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար դատապարտված չի եղել.

գնման պայմանագիր կնքելու նպատակով կեղծ տվյալներ չի ներկայացրել,

իր գործողությամբ կամ անգործությամբ գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն չի խախտել, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

«Արամ և Արմեն» ՍՊԸ-ի տնօրեն [signature] Ա. Վահանյան

07-Ա2-06-5795

24.12.09թ

«Արամ և Արմեն» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ա. Վահանյանին

ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն անհրաժեշտ է գնել ՀՀ Արարատի մարզի Երեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի մաքրման և ափերի ամրացման աշխատանքները: Առաջարկվում է Ձեզ վերոհիշյալ աշխատանքը կատարել համաձայն կից ներկայացվող պայմանագրի նախագծի:

Գնումները ֆինանսավորվելու են Հայաստանի Հանրապետության 2009թ. պետական բյուջեի «Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում» ծրագրով նախատեսված ծախսերի հաշվին:

Գնումներին մասնակցելու իրավունքը հաստատելու համար պետք է ներկայացնեք Ձեր կողմից հաստատված, ստորագրված և կնքված հայտարարություն, որ Ձեր կազմակերպությունը

ա) ունի գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար պահանջվող իրավունք, մասնագիտական հատկանիշներ, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ.

բ) դատական կարգով անվճարունակ ճանաչված չէ, լուծարման գործընթացում չի գտնվում, պայմանագրի կատարման համար հայտով ներկայացված գույք արգելանքի տակ չունի.

գ) կամ նրա ղեկավար մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում

տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար (բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է) դատապարտված չի եղել.

գնման պայմանագիր կնքելու նպատակով կեղծ տվյալներ չի ներկայացրել,

իր գործողությամբ կամ անգործությամբ գնման պայմանագրով նախատեսված պարտավորություն չի խախտել, որը հանգեցրած լինի պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

Համաձայնության դեպքում խնդրում ենք մինչև 2009թ դեկտեմբերի 25 -ը սույն գրության մեջ նշված համապատասխան փաստաթղթերը ներկայացնել գյուղատնտեսության նախարարություն:

**Նախարարի տեղակալ** **Ս. ԳԱԼՍՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 դեկտեմբերի 2009 թվականի N 1462 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1573-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և N 1 հավելվածի N 13 աղյուսակում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1 և 2 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների, Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի N 218-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից գումար հատկացնելու մասին» N 1573-Ն որոշման N 5 հավելվածում և N 5 հավելվածի N 12 աղյուսակում կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1 և 3 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության մարզերում մեծածավալ կրծողների դեմ պայքարի նպատակով անհրաժեշտ թունանյութերի ձեռքբերման համար Հայաստանի Հանրապե-





տության գյուղատնտեսության նախարարությանը 2009 թվականի չորրորդ եռամսյակում հատկացնել 36679,5 հազ. դրամ՝ Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով):

4. Սահմանել, որ սույն որոշման NN 2 և 3 հավելվածներով նախատեսված «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երերնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի հունի մաքրում և ափերի ամրացում» աշխատանքների կատարման նպատակով կնքվելիք պայմանագրում կարող է նախատեսվել մինչև 100 տոկոս կանխավճար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

2009 թ. դեկտեմբերի 22
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2009 թվականի
դեկտեմբերի 17-ի N 1462 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1573-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինը | խումբը | դասը | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) տարի |
|---|---|---|---|---|
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | 0.0 |
| | | | այդ թվում՝ | |
| 04 | | | ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ | (36,679.5) |
| | | | այդ թվում՝ | |
| | 02 | | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ՁԿՆՈՐՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ | (36,679.5) |
| | | | այդ թվում՝ | |
| | | 01 | ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ | (36,679.5) |
| | | | այդ թվում՝ | |
| | | | 12. Հողերի մելիորատիվ վիճակի պահպանման և բարելավման միջոցառումներ (Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում) | (36,679.5) |
| | | | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն | (36,679.5) |
| | | | որից՝ | |
| | | | Այլ կապիտալ դրամաշնորհներ | (36,679.5) |
| 11 | | | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 36,679.5 |
| | | | այդ թվում՝ | |
| | 01 | | ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | 36,679.5 |
| | | | այդ թվում՝ | |
| | | 01 | ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴ | 36,679.5 |
| | | | այդ թվում՝ | |
| | | | 01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 36,679.5 |
| | | | ՀՀ կառավարություն | 36,679.5 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

EK608

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2009 թվականի
դեկտեմբերի 17-ի N 1462 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 13 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինը | խումբը | դասը | Ծրագրի համարը | Ծրագրերի և կատարողների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) ընդամենը | ընդամենը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր | այդ թվում՝ շենքերի և շինությունների շինարարություն | շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | նախագծահետազոտական, գեոդեզիա-քարտեզագրական ծախսեր | ոչ ֆինանսական ակտիվների գծով այլ ծախսեր | կապիտալ դրամաշնորհներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | (36,679.5) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | (36,679.5) |
| | | | | ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | (36,679.5) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | (36,679.5) |
| | | | | այդ թվում՝ | | | | | | | |
| 04 | 02 | 01 | 12 | Հողերի մելիորատիվ վիճակի պահպանման և բարելավման միջոցառումներ (Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում) | (36,679.5) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | (36,679.5) |
| | | | | Արտաշատ գետի հունի մաքրում և ափերի ամրացում | (22,900.0) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | (22,900.0) |
| | | | | Հրազդան գետի հունի մաքրում և ափերի ամրացում ՊԿ 28-60 - 49+11,5 հատվածում | (13,300.0) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | (13,300.0) |
| | | | | ՀՀ Արարատի մարզի Ոսկետափի, Ավշար և Այգավան համայնքներում մեկական խորքային հորի հորատում | (479.5) | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | (479.5) |
| 04 | 02 | 01 | 21 | Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | ՀՀ Արմավիրի մարզում Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքների վերականգնում՝ փաթեթ 17, սահմանային սյուն N 40-40/0 | (20,000.0) | 0.0 | 0.0 | (20,000.0) | 0.0 | 0.0 | 0.0 |
| | | | | ՀՀ Արարատի մարզի Երերավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հիդրոդինամիկ ջրանցքի հունի մաքրում և ափերի ամրացում | 20,000.0 | 0.0 | 0.0 | 20,000.0 | 0.0 | 0.0 | 0.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

EK608

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2009 թվականի
դեկտեմբերի 17-ի N 1462 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 1573-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման | | | Ծրագրի համարը | Ծրագրերի և կատարողների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները` փակագծերում) |
|---|---|---|---|---|---|
| բաժինը | խումբը | դասը | | | տարի |
| | | | | ԸՆԴԱՄԵՆԸ | (36,679.5) |
| | | | | ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | (36,679.5) |
| | | | | այդ թվում` | |
| 04 | 02 | 01 | 12 | Հողերի մելիորատիվ վիճակի պահպանման և բարելավման միջոցառումներ (Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում) | (36,679.5) |
| | | | | Աղստև գետի հունի մաքրում և ափերի ամրացում | (22,900.0) |
| | | | | Հրազդան գետի հունի մաքրում և ափերի ամրացում Պկ 28-60 - 49+11,5 հատվածում | (13,300.0) |
| | | | | ՀՀ Արարատի մարզի Ոսկետափ, Ավշար և Այգևան համայնքներում մեկական խորքային հորի հորատում | (479.5) |
| 04 | 02 | 01 | 21 | Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում | 0.0 |
| | | | | ՀՀ Արմավիրի մարզում Արաքս գետի ափապաշտպան կառուցվածքների վերականգնում` փաթեթ 17, սահմանային սյուն N 40-40/0 | (20,000.0) |
| | | | | ՀՀ Արարատի մարզի Եղեգնավան համայնքին հարող սահմանային գոտու տարածքում Վեդիչայ հեղեղատար ջրանցքի հունի մաքրում և ափերի ամրացում | 20,000.0 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

EK608